Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ Հ.Մ.Ը.Մ. 12-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 29 հուլիսի, 2025 թ.)

Սիրելի՛ մասնակիցներ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության 12-րդ մարզախաղերի,

Հայրապետական սիրով ողջունում եւ Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում ուխտավորաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելած հայորդիներիդ: Գոհունակություն է Հայրապետիս համար, որ ավանդական դարձած մարզախաղերի առիթով աշխարհի տարբեր կողմերից համախմբվել եք հայրենիքում՝ մրցապայքարում դրսեւորելու ձեր հմտություններն ու կարողությունները, միաժամանակ ճանաչելու իրար եւ բարեկամանալու միմյանց հետ: Խիստ կարեւոր է երիտասարդներիդ մասնակցությունը նման վարժանքներին ու մրցույթներին, որոնք միջոց են զորանալու մարմնով եւ հետեւողական աշխատանքով, տոկունությամբ ու ոգու ամրությամբ արձանագրելու ապագա հաղթանակներ: Վարժանքներն ու մրցույթները միջոց են նաեւ զորանալու հոգով՝ Աստծուն ապավինած դիմակայելու բոլոր փորձություններին ու դժվարություններին եւ աննկուն ընթանալու դեպի հաղթություն: Ուստի, պարբերաբար կազմակերպվող նման միջոցառումները իրենց նշանակությամբ եւ առաքելությամբ ավելին են, քան սոսկ մարզական մրցույթներ:

Սիրելի՛ զավակներ Մեր, գիտեք, որ բազմաթիվ դժվարություններ ու խնդիրներ են ծառացած մեր ժողովրդի եւ հայրենիքի առջեւ: Արցախյան պատերազմի հետեւանքով հայրենի երկիրը տակավին դիմագրավում է լրջագույն անվտանգային մարտահրավերներ, կարիքի մեջ է տեղահանված արցախահայությունը, ներհասարակական կյանքում խորանում են անհամերաշխությունն ու անհանդուրժողությունը, գերակշռող են եւ խորապես անհանգստացնող ապագայի անորոշության զգացումները:

Հայրապետիս համար ցավալի է նաեւ արձանագրել, որ Հայաստանի վարչապետը եւ իշխանության որոշ ներկայացուցիչներ դատապարտելի արշավ են սանձազերծել մեր Սուրբ Եկեղեցու եւ եկեղեցականության

դեմ, շարունակաբար հնչեցվում են տարատեսակ մեղադրանքներ, ատելության ու թշնամանքի խոսքեր, այլեւ ապօրինաբար ազատազրկվել են մեր երկու արքեպիսկոպոսներ եւ ազգային մեծանուն բարերարը։ Հավատում ենք, որ արդարությունը պիտի հաղթանակի, եւ համախումբ ջանքերով պիտի թույլ չտանք, որ մեր կյանքում գերակայեն եղբայրատյացությունը, կեղծիքն ու չարագործությունները եւ խաթարվի ազգային միասնականությունը։ Հայրենիքի համար այս բարդագույն իրավիճակում անգամ պետք չէ հուսահատվել եւ հիասթափություն ապրել։ Դուք, որ ծնվել ու հասակ եք առել աշխարհի տարբեր երկրներում, ինչպես եւ Հայաստանում ու Արցախում, պատասխանատվություն ունեք մեր ժողովրդի լուսեղեն գալիքի կերտման գործում՝ ձեր ուժերն ու կարողությունները ծառայեցնելու ի սեր ազգի ու հայրենիքի։ Նաեւ դուք առաքելություն ունեք ազգային միաբանությունն ամրապնդելու, Հայաստան-Սփյուռք կապերն անսասան պահպանելու եւ նորովի արդյունավորելու։ Այս հանձնառության բարեհաջող իրագործման համար առանձնակի կարեւոր են ձեր հայրենաճանաչությունը, ազգային ինքնագիտակցությունը, հայոց պետականության ամրապնդման կամքն ու վճռականությունը եւ դարերով նվիրագործված մեր արժեհամակարգի անխաթար պահպանումը։ Դուք ապագան եք մեր հայրենիքի ու ազգի եւ երաշխիքը հայոց հարատեւության, համընդհանուր մեր իղձերի ու երազանքների իրականացման։ Ձեր այցը հայրենիք կարեւոր քաջալերանք է հայրենաբնակ մեր ժողովրդի, ձեզ հասակակից ձեր քույրերի ու եղբայրների համար։

Հայրապետիս հորդորն է՝ ձեր հոգում մշտավառ պահեք հայրենյաց սերը, ուժ առեք հարազատ հողից, մեր բազմադարյա սրբություններից եւ ներշնչվեք մեր հայրերի հավատաշեն գործերից։ Հավատարիմ մնացեք ազգային-հոգեւոր արժեքներին, զորացրեք ձեր սրտերում որդիական նվիրումը առ հայրենին, մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը։ Ուր էլ որ գտնվեք, անխախտ պահեք ձեր ազգային ինքնությունը, հպարտացեք ձեր պատմությամբ, նախնյաց կերտած ժառանգությամբ եւ հանուն արդարության, հանուն անկախ կյանքի հայ ժողովրդի մղած անդուլ պայքարի հզոր ոգով։ Միշտ արիասիրտ կանգնեք ի պաշտպանություն մեր ժողովրդի իրավունքների եւ նրա արդար դատի։ Հայաստանում ձեր մեկտեղումի այս նշանակալի եւ անմոռանալի օրերը թող դառնան առիթ ոգեշնչումի ու հանձնառության՝ ձեր գիտելիքներով ու շնորհներով բոլորանվեր օգտակար ծառայություն բերելու ազգային

կյանքում եւ նորանոր հաջողություններ արձանագրելու՝ ի շահ մեր ժողովրդի եւ հայրենիքի։

Հայրապետիս համար առանձնակի գոհունակություն է այս առիթով Մեր գնահատանքի խոսքը բերելու մարզախաղերի կազմակերպիչներին եւ բոլոր պատասխանատուներին իրենց նվիրյալ եւ ազգօգուտ ծառայության համար։ Թող Աստված պտղաբեր դարձնի ձեր ջանքերը մեր զավակներին կրթելու եւ դաստիարակելու կարեւոր առաքելության մեջ, որոնց հայրենասեր կյանքի ու գործոց շնորհիվ պիտի առավել պայծառանա հայոց կյանքը ի Հայաստան եւ ի սփյուռս։

Սիրելի՛ պատանիներ եւ օրիորդներ, Միածնաէջ Մայր Տաճարի աղոթաբույր կամարների ներքո հայցում ենք Երկնավոր Տիրոջը, որպեսզի ապրեք առողջ ու երջանիկ, լինեք արժանավոր զավակները ձեր հայրերի եւ իրագործեք նրանց նվիրական տեսիլքներն ու երազանքները։ Թող Բարձրյալ Աստված խաղաղություն եւ ապահովություն շնորհի հայրենի մեր երկրին, բարօրություն՝ աշխարհասփյուռ մեր ժողովրդին այսօր եւ հավիտյանս. ամեն։

Ուխտներդ ի կատար։